

Հաստատում եմ՝

ՀՀ կրթության և գիտության նախարար

_____ Ա. Հարությունյան

« _____ » _____ 2019թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

021201.01.6 ԴԻՉԱՅՆ

Դիզայնմասնագիտությամբ ՀԳՊ Ա ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ
«Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Դիմանկար բնորոշից: Դիմորդի գիտելիքները և ունակությունները պարզելու նպատակով տրվում է առաջա
դրանք՝ դիմանկար (նկարել մատիտով): Տեղավորել A3 չափի թղթի մեջ,
կառուցել գլխի համաչափությունները, վզի շարժումը գլխի հետ,
ծավալներին մեկնաբանության փոխհարաբերությունը,
տոներին պլանների ռիզմությամբ ստանալ տարածությունն կերպար (характер):

Անհրաժեշտ նյութերը.

Կոշտ և փափուկ մատիտներ, A3 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, ռետին, սրիչ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

- | | |
|--------------------------------------|------------|
| ա. գլխի տեղադրումը թղթի մակերեսի մեջ | 0-4 միավոր |
| բ. պարանոցի շարժումը գլխի նկատմամբ | 0-4 միավոր |

գ. անատոմիական համաչափությունների պահպանումը	0-4 միավոր
դ. ծավալների տոնային և պլանային հարաբերությունները	0-4 միավոր
ե. բնորդի կերպարի առանձնահատկության բացահայտումը	0-4 միավոր

2. «Գունանկար»

Առաջադրանք.

Նատյուրմորտ: Դիմորդի գիտելիքներն ու ունակությունները պարզելու նպատակով տրվում է նատյուրմորտ նկարելու առաջադրանք: A2 չափսի թղթի վրա ջրային ներկերով անհրաժեշտ է նկարել նատյուրմորտ՝ լուծելով թղթի մակերեսի մեջ ճիշտ տեղավորելու, հեռանկարը և իրերի համաչափությունները ճիշտ կառուցելու, ծավալները տաք և սառը գույներով և գունային ներդաշնակությունը ճիշտ կազմակերպելու խնդիրները (ըստ միջավայրի):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափսի թուղթ, 50x70 չափի պլանշետ, ջրային ներկեր(ակրիլ, տեմպերա, գուաշ, ջրաներկ), մատիտ, ջրի համար բաժակ, վրձիններ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա. նատյուրմորտի տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-4 միավոր
բ. առարկաների համաչափությունը, առիստեկտոնիկ կապը միջավայրի հետ	0-4 միավոր
գ. հեռանկարի խնդրի լուծումը	0-4 միավոր
դ. առարկաների, նյութականության և ծավալի լուծումները	0-4 միավոր
ե. գունային ներդաշնակությունը	0-4 միավոր

3. «Կոմպոզիցիա»

Առաջադրանք № 1.

Դիմորդի գծագրական գիտելիքները բացահայտող առաջադրանք: Առաջադրանքը բաղկացած է երկու խնդիրից.

ա) պրոյեկցիոն գծագրություն: Դիմորդին առաջադրվում է գծագրել՝ գլանի կամ կանոնավոր պրիզմա, բուրգ, կոն, որի մեջ բացված է «Y» կամ «Z» կոորդինատային առանցքին զուգահեռ, այլ կանոնավոր մարմնի հատումով գոյացած անցք: Տրվում են երկու պրոյեկցիաները, որոնցից մեկը թերի է: Պահանջվում է լրացնել թերի պրոյեկցիան, գծագրել երրորդը՝ ցույց տալով չերևացող գծերը և կառուցել ակնառու պատկերը (աքսոնոմետրիա):

բ) Լծորդումներ: Դիմորդին առաջադրվում է երկրաչափական բարդ (բաղադրյալ) պատկեր, որի կառուցումը ստուգում է երկրաչափական գծագրության իմացությունը:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի գծագրական թուղթ, 50x70 չափի պլանշետ, գծագրական պիտույքներ. երկու եռանկյուն քանոն (45° և 60/30° անկյուններով), կարկին, չափակարկին, անկյունաչափ, չափաքանոն:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

1) խնդրի ա) – 10 միավոր

- | | |
|--|------------|
| ա) տրված պրոյեկցիաների լրացում (չնշված տարրերի գծագրում) | 0-2 միավոր |
| բ) երրորդ պրոյեկցիայի գծագրում | 0-3 միավոր |
| գ) ակնառու պատկերի (աքսոնոմետրիայի) կառուցում | 0-3 միավոր |
| դ) գծագրական տեխնիկան (կատարման որակը) | 0-2 միավոր |

2) խնդիր բ) – 10 միավոր

- | | |
|--|------------|
| ա) պատկերը կազմող բաղկացուցիչ տարրերի կառուցումը | 0-6 միավոր |
| բ) գծագրական տեխնիկան (կատարման որակը) | 0-4 միավոր |

Առաջադրանք № 2.

Դիմորդի գունային և ծավալատարածական կոմպոզիցիա կազմելու ունակությունը բացահայտող առաջադրանք (ստեղծագործական աշխատանք):

Դիմորդին առաջադրվում է՝ տրված պատկերներից առնվազն երեքի վրա հիմնվելով, նկարել երկրաչափական մարմիններ (ոչ պակաս, քան 6-ը), այնուհետև նրանցից ընտրելով առնվազն երեքը՝ մատիտով կատարել (առանց քանոնների օգնության) ծավալատարածական կոմպոզիցիաների էսքիզներ: Թղթի մյուս կեսի վրա կատարել վերջնական ծավալատարածական երփներանգ (գունային) կոմպոզիցիա:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի գծագրական թուղթ, 50x70 չափի պլանշետ, ջրային ներկեր (գունավոր մատիտներ/կամֆլումաստերներ), վրձին, քանոններ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

- | | |
|---|------------|
| ա) պատկերը կազմող բաղկացուցիչ տարրերի կառուցումը | 0-4 միավոր |
| բ) էսքիզները և դրանց կատարման տեխնիկան | 0-4 միավոր |
| գ) ստեղծագործության տեղադրումը թղթի վրա | 0-3 միավոր |
| դ) ստեղծագործության մեջ երկրաչափական մարմինների բազմազանությամբ արտահայտված դիմորդի երևակայությունը | 0-3 միավոր |
| ե) կատարված հորինվածքի գույների ներդաշնակությունը | 0-3 միավոր |
| զ) աշխատանքի կատարողական հմտությունները և որակը | 0-3 միավոր |

021201.06.6 ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆ

Ինտերիեր դիզայնմասնագիտությամբ ՀԳՊԱ Բակալավրիատ
ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Նաստյուրմորտ: Դիմորդի գիտելիքներն ու ունակությունները պարզելու նպատակով տրվում է գիպսե երկրաչափական մարմիններով նաստյուրմորտ նկարելու առաջադրանք: A2 չափսի թղթի վրա մատիտով անհրաժեշտ է նկարել նաստյուրմորտ՝ լուծելով թղթի մակերեսի մեջ ճիշտ տեղավորելու խնդիրը, հեռանկարի և գիպսե մարմինների համաչափությունների ճիշտ կառուցման խնդիրը, ծավալների, տոնային և պլանային խնդիրների ճիշտ մեկնաբանությունները (ըստ հեռանկարի կանոնների):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափսի թուղթ, 50x70 չափի պլանշետ, կոշտ և փափուկ մատիտներ, ռետին, սրիչ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա. գիպսե երկրաչափական առարկաների տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-5 միավոր
բ. առարկաների համաչափությունը, արխիտեկտոնիկ կապը միջավայրի հետ	0-5 միավոր
գ. լուսաստվերային և տոնային խնդրի լուծումը	0-5 միավոր
դ. առարկաների ծավալի, հեռանկարի, նյութական ղնդիրների լուծումը	0-5 միավոր

2. «Գունանկար»

Առաջադրանք.

Նատյուրմորտ: Դիմորդի գիտելիքներն ու ունակությունները պարզելու նպատակով տրվում է նատյուրմորտ նկարելու առաջադրանք: A2 չափսի թղթի վրա ջրայիններկերով անհրաժեշտ է նկարել նատյուրմորտ՝ լուծելով թղթի մակերեսի մեջ ճիշտ տեղավորելու, հեռանկարը և իրերի համաչափությունները ճիշտ կառուցելու, ծավալները տաք և սառը գույներով և գունային ներդաշնակությունը ճիշտ կազմակերպելու խնդիրները (ըստ միջավայրի):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափսի թուղթ, 50x70 չափի պլանշետ, ջրային ներկեր(ակրիլ, տեմպերա, գուաշ, ջրաներկ), մատիտ, ջրի համար բաժակ, վրձիններ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա. նատյուրմորտի տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-4 միավոր
բ. առարկաների համաչափությունը, արխիտեկտոնիկ կապը միջավայրի հետ	0-4 միավոր
գ. հեռանկարի խնդրի լուծումը	0-4 միավոր
դ. առարկաների, նյութի և ծավալի լուծումները	0-4 միավոր
ե. առարկաների գունային ներդաշնակությունը	0-4 միավոր

3. «Կոմպոզիցիա»

Առաջադրանք № 1.

Դիմորդի գծագրական գիտելիքները բացահայտող առաջադրանք: Առաջադրանքը բաղկացած է երկու խնդիրից.

ա) պրոյեկցիոն գծագրություն: Դիմորդին առաջադրվում է գծագրել՝ զլանկամկանոնավոր պրիզմա, բուրգ, կոն, որի մեջ քաղցված է «Y» կամ «Z» կոորդինատային առանցքի նզուգահեռ, այլ կանոնավոր մարմնի հատումով գոյացած անցք: Տրվում են երկու պրոյեկցիաները, որոնցից մեկը թերի է: Պահանջվում է լրացնել թերի պրոյեկցիան, գծագրել երրորդը՝ ցույց տալով շերտաձևերը և կառուցել ակնառու պատկերը (աքսոնոմետրիա):

բ) Լծորդումներ: Դիմորդին առաջադրվում է երկրաչափական բարդ (բաղադրյալ) պատկեր, որի կառուցումը ենթադրում է երկրաչափական գծագրության իմացություն:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի գծագրական թուղթ, 50x70 չափի պլանշետ, գծագրական պիտույքներ. երկու եռանկյուն քանոն (45° և 60/30° անկյուններով), կարկին, չափակարկին, անկյունաչափ, չափաքանոն:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

1) խնդրի ա) – 10 միավոր

- | | |
|--|------------|
| ա) տրված պրոյեկցիաների լրացում (չնշված տարրերի գծագրում) | 0-2 միավոր |
| բ) երրորդ պրոյեկցիայի գծագրում | 0-3 միավոր |
| գ) ակնառու պատկերի (աքսոնոմետրիայի) կառուցում | 0-3 միավոր |
| դ) գծագրական տեխնիկան (կատարման որակը) | 0-2 միավոր |

2) խնդրի բ) – 10 միավոր

- | | |
|--|------------|
| ա) պատկերը կազմող բաղկացուցիչ տարրերի կառուցումը | 0-6 միավոր |
|--|------------|

Առաջադրանք № 2.

Դիմորդի ծավալատարածական կոմպոզիցիակազմելու և ակնությունը բացահայտող առաջադրանք (ստեղծագործական աշխատանք): Դիմորդին առաջադրվում է՝ տրված պատկերներից առնվազն երեքի վրա հիմնվելով, նկարել երկրաչափական մարմիններ (ոչ պակաս, քան 6-ը), այնուհետև նրանցից ընտրելով առնվազն երեքը՝ մատիտով կատարել (առանց քանոնների օգնության) ծավալատարածական կոմպոզիցիաների էսքիզներ: Թղթի մյուս կեսի վրա կատարել վերջնական ծավալատարածական տոնային կոմպոզիցիա (օգտագործելով գծագրական գործիքներ):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի գծագրական թուղթ, 50x70 չափի պլանշետ, մատիտներ, քանոններ, գրիչներ, ֆլումաստերներ, ջրայիններկեր:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

- ա) պատկերը կազմող բաղկացուցիչ տարրերի կառուցումը 0-4 միավոր
- բ) էսքիզները ներանց կատարման տեխնիկան 0-4 միավոր
- գ) ստեղծագործության տեղադրումը թղթի վրա 0-3 միավոր
- դ) ստեղծագործության մեջ երկրաչափական մարմինների բազմազանությամբ արտահայտված դիմորդի երևակայությունը 0-3 միավոր
- ե) Կատարված հորինվածքի ծավալների ներդաշնակությունը 0-3 միավոր
- զ) աշխատանքի կատարողական հմտությունները և որակը 0-3 միավոր

021401.01.6 ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆԱՐՎԵՍ

Դեկորատիվ կիրառական արվեստ մասնագիտությամբ ՀԳՊԱ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Դիմանկար բնորդից: Դիմորդի գիտելիքները և ունակությունները պարզելու նպատակով տրվում է առաջադրանք՝ դիմանկար (նկարել մատիտով): Տեղավորել A3 չափի թղթի մեջ, կառուցել գլխի համաչափությունները, վզի շարժումը գլխի հետ, ծավալների մեկնաբանության փոխհարաբերություն, տոների և պլանների օգնությամբ ստանալ տարածություն և կերպար (характер):

Անհրաժեշտ նյութերը.

Կոշտ և փափուկ մատիտներ, A3 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, ռետին, սրիչ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա. գլխի տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-4 միավոր
բ. պարանոցի շարժումը գլխի նկատմամբ	0-4 միավոր
գ. անատոմիական համաչափությունների պահպանումը	0-4 միավոր
դ. ծավալների տոնային և պլանային հարաբերությունները	0-4 միավոր
ե. բնորդի կերպարի առանձնահատկության բացահայտումը	0-4 միավոր:

2. «Գունանկար»

Առաջադրանք.

Նատյուրմորտ: Դիմորդի գիտելիքներն ու ունակությունները պարզելու նպատակով տրվում է նատյուրմորտ նկարելու առաջադրանք: A2 չափի թղթի վրա ջրային ներկով անհրաժեշտ է նկարել նատյուրմորտ՝ լուծելով թղթի կամ ստվարաթուղթի մակերեսի մեջ ճիշտ տեղավորելու, հեռանկարը և իրերի համաչափությունները ճիշտ կառուցելու, ծավալները տաք և սառը գույներով ու գունային ներդաշնակությունը ճիշտ կազմակերպելու խնդիրները (ըստ ինտերիերի):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի թուղթ կամ ստվարաթուղթ, 50x70 չափի պլանշետ,ակրիլ, տեմպերա, գուաշ,ջրաներկ, մատիտ, ջրի համար բաժակ, վրձիններ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա. նատյուրմորտի տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-4 միավոր
բ. առարկաների համաչափությունը, արխիտեկտոնիկ կապը միջավայրի հետ	0-4 միավոր
գ. հեռանկարի խնդրի լուծումը	0-4 միավոր
դ. առարկաների, նյութի և ծավալի լուծումները	0-4 միավոր
ե. առարկաների գունային ներդաշնակությունը	0-4 միավոր

3. «Կոմպոզիցիա»

Առաջադրանք № 1. (Խեցեգործություն)

Դիմորդի ծավալատարածային և գունայինզգացողությունը բացահայտող առաջադրանք: Տրվում է երեք առարկա՝ ջրաման, ծաղկաման, մրգաման: Ըստ նախընտրած թեմայի՝ դիմորդը պետք է գտնի այս առարկայի նոր գեղարվեստական ձևի (ֆորմայի) լուծումը: Արդյունքում դիմորդը պետք է լուծի հետևյալ խնդիրները.

- ա. գծել տվյալ առարկայի երեք պրոյեկցիաները
- բ. նկարել դրա ծավալային տեսքը
- գ. հարթային լուծմամբ ստեղծել համապատասխան զարդանախշ
- դ. ծավալային մակերեսի վրա նկարել ստեղծված զարդանախշը և լուծել գույնով:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, մատիտ, ջրային ներկեր, տուշ, ֆլումաստերներ, գծագրական գործիքներ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

- | | |
|---|------------|
| ա) թղթի վրա երեք պրոյեկցիաների բաշխումը, աքսոնոմետրիան և ժապավենը | 0-3 միավոր |
| բ) առաջադրված առարկայի, ծավալների կառուցումը | 0-4 միավոր |
| գ) զարդանախշի կատարումը և համապատասխանությունը թեմային | 0-3 միավոր |
| դ)առարկայի ծավալի կառուցումը (աքսոնոմետրիան) | 0-4 միավոր |
| ե) զարդանախշի տեղադրումը առարկայի ծավալի վրա | 0-3 միավոր |
| զ) խնդրի գունային լուծումը | 0-3 միավոր |

Առաջադրանք № 1. (Գորգագործություն)

Դիմորդի հարթապատկերային և գունային զգացողությունը բացահայտող առաջադրանք: Տրվում է 1-2 զարդանախշ, որոնց կիրառմամբ դիմորդը պետք է ստեղծի հորինվածք գորգի համար: Արդյունքում դիմորդը պետք է լուծի հետևյալ խնդիրները.

- ա. հարթային լուծմամբ ստեղծել համապատասխան հորինվածք;
- բ. հարթային մակերեսի վրա նկարել հորինվածքը և լուծել գույնով;
- գ. ապահովել կատարողական վարպետությունը:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, մատիտ, ջրային ներկեր, տուշ, ֆլումաստերներ, գծագրական գործիքներ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

- ա) հորինվածքի կատարումը և համապատասխանությունը տրված զարդանախշերին 0-5 միավոր
- բ) հորինվածքի տեղադրումը մակերեսի վրա 0-5 միավոր
- գ) հորինվածքի գունային լուծումը 0-5 միավոր
- դ) կատարողական վարպետությունը 0-5 միավոր

Առաջադրանք № 2.

Կոմպոզիցիա տրված թեմայով: Տրված երկրաչափական պատկերներից ընտրել երկուսը կամ երեքը և դրանց համադրումով կազմակերպել կոմպոզիցիաներ: A2 թուղթը բաժանել երկու մասի: Մի կեսի վրա կատարել սիմետրիկ, մյուսի վրա ասիմետրիկ հարթային կոմպոզիցիաներ (մեկը գույնով, մյուսը՝ գրիզով (միագույն)): Երկրաչափական պատկերների չափերը կարող են փոփոխվել (մեծացվել կամ փոքրացվել):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի գծագրական թուղթ, 50x70 չափի պլանշետ, մատիտներ, ջրային ներկեր՝ ջրաներկ, գուաշ, ակրիլ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

- ա) հորինվածքի ստեղծումը տրված երկրաչափական մարմինների համադրումով 0-5 միավոր
- բ) սիմետրիկ կոմպոզիցիայի կազմակերպումը 0-5 միավոր
- գ) ասիմետրիկ կոմպոզիցիայի կազմակերպումը 0-5 միավոր
- դ) գունային և միագույն լուծումների միջոցով հավասարակշռության ստեղծումը 0-5 միավոր

021201.04.6 ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱ

Համակարգչային գրաֆիկա մասնագիտությամբ ՀԳՊԱ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Դիմանկար բնորոշից: Դիմորդի գիտելիքները և ունակությունները պարզելու նպատակով տրվում է առաջադրանք՝ դիմանկար (նկարել մատիտով): Տեղավորել A3 չափի թղթի մեջ, կառուցել գլխի համաչափությունները, վզի շարժումը գլխի հետ, ծավալների մեկնաբանության փոխհարաբերություն, տոների և պլանների օգնությամբ ստանալ տարածություն և կերպար (характер):

Անհրաժեշտ նյութերը.

Կոշտ և փափուկ մատիտներ, A3 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, ռետին, սրիչ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա) գլխի տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-4 միավոր
բ) պարանոցի շարժումը գլխի նկատմամբ	0-4 միավոր
գ) անատոմիական համաչափությունների պահպանումը	0-4 միավոր
դ) ծավալների տոնային և պլանային հարաբերությունները	0-4 միավոր
ե) բնորդի կերպարի առանձնահատկության բացահայտումը	0-4 միավոր:

2. «Գունանկար»

Առաջադրանք.

Նատյուրմորտ: Դիմորդի գիտելիքներն ու ունակությունները պարզելու նպատակով տրվում է նատյուրմորտ նկարելու առաջադրանք: A2 չափի թղթի վրա ջրաներկով անհրաժեշտ է նկարել

նաստյուրմորտ՝ լուծելով թղթի մակերեսի մեջ ճիշտ տեղավորելու, հեռանկարը և իրերի համաչափությունները ճիշտ կառուցելու, ծավալները տաք և սառը գույներով ու գունային ներդաշնակությունը ճիշտ կազմակերպելու խնդիրները (ըստ ինտերիերի):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, ակրիլ, տեմպերա, գուաշ, ջրաներկ, մատիտ, ջրի համար բաժակ, վրձիններ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

- | | |
|--|------------|
| ա) նաստյուրմորտի տեղադրումը թղթի մակերեսի մեջ | 0-4 միավոր |
| բ) առարկաների համաչափությունը, արխիտեկտոնիկ կապը միջավայրի հետ | 0-4 միավոր |
| գ) հեռանկարի խնդրի լուծումը | 0-4 միավոր |
| դ) առարկաների, նյութի և ծավալի լուծումները | 0-4 միավոր |
| ե) առարկաների գունային ներդաշնակությունը | 0-4 միավոր |

3. «Կոմպոզիցիա»

Առաջադրանք № 1.

Դիմորդի գծագրական գիտելիքները բացահայտող առաջադրանք: Առաջադրանքը բաղկացած է երկու խնդիրից.

ա) պրոյեկցիոն գծագրություն: Դիմորդին առաջադրվում է գծագրել՝ զլան կամ կանոնավոր պրիզմա, բուրգ, կոն, որի մեջ բացված է «Y» կամ «Z» կոորդինատային առանցքին զուգահեռ, այլ կանոնավոր մարմնի հատումով գոյացած անցք: Տրվում են երկու պրոյեկցիաները, որոնցից մեկը թերի է: Պահանջվում է լրացնել թերի պրոյեկցիան, գծագրել երրորդը՝ ցույց տալով չերևացող գծերը և կառուցել ակնառու պատկերը (աքսոնոմետրիա):

բ) Լծորդումներ: Դիմորդին առաջադրվում է երկրաչափական բարդ (բաղադրյալ) պատկեր, որի կառուցումը ենթադրում է երկրաչափական գծագրության իմացություն:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի գծագրական թուղթ, 50x70 չափի պլանշետ, գծագրական պիտույքներ. երկու եռանկյուն քանոն (45° և 60/30° անկյուններով), կարկին, չափակարկին, անկյունաչափ, չափաքանոն:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

1) խնդրի ա) – 10 միավոր

- | | |
|--|------------|
| ա) տրված պրոյեկցիաների լրացում (չնշված տարրերի գծագրում) | 0-2 միավոր |
| բ) երրորդ պրոյեկցիայի գծագրում | 0-3 միավոր |
| գ) ակնառու պատկերի (աքսոնոմետրիայի) կառուցում | 0-3 միավոր |
| դ) գծագրական տեխնիկան (կատարման որակը) | 0-2 միավոր |

2) խնդիր բ) – 10 միավոր

- | | |
|--|------------|
| ա) պատկերը կազմող բաղկացուցիչ տարրերի կառուցումը | 0-6 միավոր |
| բ) գծագրական տեխնիկան (կատարման որակը) | 0-4 միավոր |

Առաջադրանք № 2.

Կոմպոզիցիա տրված թեմայով: Տրված երկրաչափական պատկերներից ընտրել երկուսը կամ երեքը և դրանց համադրումով կազմակերպել կոմպոզիցիաներ: A2 թուղթը բաժանել երկու մասի: Մի կեսի վրա կատարել սիմետրիկ, մյուսի վրա ասիմետրիկ հարթային կոմպոզիցիաներ (մեկը գույնով, մյուսը՝ գրիզով (միագույն)): Երկրաչափական պատկերների չափերը կարող են փոփոխվել (մեծացվել կամ փոքրացվել):

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի գծագրական թուղթ, 50x70 չափի պլանշետ, մատիտներ, ջրային ներկեր՝ ջրաներկ, գուաշ, ակրիլ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

ա) հորինվածքի ստեղծումը տրված երկրաչափական մարմինների համադրումով	0-5 միավոր
բ) սիմետրիկ կոմպոզիցիայի կազմակերպումը	0-5 միավոր
գ) ասիմետրիկ կոմպոզիցիայի կազմակերպումը	0-5 միավոր
դ) լուծումների միջոցով հավասարակշռության ստեղծումը	0-5 միավոր

021201.03.6 ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ

Հագուստի մոդելավորում մասնագիտությամբ ՀԳՊԱ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Բնորդի դիմանկար: Դիմորդի գիտելիքները և ունակությունները պարզելու նպատակով տրվում է առաջադրանք՝ դիմանկար (նկարել մատիտով): Տեղավորել A3 չափի թղթի մեջ, կառուցել գլխի համաչափությունները, վզի շարժումը գլխի հետ, ծավալների մեկնաբանության փոխհարաբերություն, տոների և պլանների օգնությամբ ստանալ տարածություն և կերպար (характер):

Անհրաժեշտ նյութերը.

Կոշտ և փափուկ մատիտներ, A3 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, ռետին, սրիչ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա) գլխի տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-4 միավոր
բ) պարանոցի շարժումը գլխի նկատմամբ	0-4 միավոր
գ) անատոմիական համաչափությունների պահպանումը	0-4 միավոր
դ) ծավալների տոնային և պլանային հարաբերությունները	0-4 միավոր
ե) բնորդի կերպարի առանձնահատկության բացահայտումը	0-4 միավոր

2. «Գունանկար»

Առաջադրանք.

Նատյուրմորտ: Դիմորդի գիտելիքներն ու ունակությունները պարզելու նպատակով տրվում է առաջադրանք՝ թղթի վրա ջրաներկով նկարել նատյուրմորտ՝ լուծելով հեռանկարային, մակերեսի մեջ տեղադրելու, համաչափությունների գունային և ծավալային խնդիրները:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ,ակրիլ, տեմպերա, գուաշ,ջրաներկ, մատիտ, ջրի համար բաժակ, վրձիններ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 10 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 3 օրվա ընթացքում:

Գնահատման չափանիշները.

ա) նատյուրմորտի տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-4 միավոր
բ) առարկաների համաչափությունը, արխիտեկտոնիկ կապը միջավայրի հետ	0-4 միավոր
գ) հեռանկարի խնդրի լուծումը	0-4 միավոր
դ) առարկաների, նյութի և ծավալի լուծումները	0-4 միավոր
ե) գունային ներդաշնակությունը	0-4 միավոր

3. «Կոմպոզիցիա»

Երկու առաջադրանքների նպատակն է բացահայտել դիմորդի ծավալատարածային, հարթապատկերային մտածողական ունակությունները, գունային ճաշակը և երևակայությունը:

Առաջադրանք № 1.

Երկու կամ երեք ծաղկային պատկերներով, ըստ դիմորդի ընտրության, նրանց համադրումով կազմակերպել կոմպոզիցիա: Լուծումը՝ գունային, ծավալատարածական կամ հարթային:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափի թուղթ, 50x70 չափի պլանշետ, մատիտ, ջրային ներկեր, գուաշ, ակրիլ, տուշ, ֆլումաստերներ:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

ա) ստեղծագործության տեղադրում մակերեսի մեջ	0-2 միավոր
բ) դետալների չափսերի փոխադարձ հարաբերությունը	0-2 միավոր
գ) կոմպոզիցիոն կառուցումը	0-4 միավոր
դ) տրամադրության ստեղծումը, ընդհանուր բնութագիրը	0-3 միավոր
ե) ծավալային (լուսաստվերային) կամ հարթային լուծումները	0-4 միավոր
զ) ռիթմի զգացողությունը	0-2 միավոր
է) գունային և տոնային (կոլորիտի) լուծումները	0-3 միավոր

Առաջադրանք № 2.

Կոմպոզիցիա տրված երկրաչափական պատկերներով: (ա) A2 չափսի թղթի վրա, օգտվելով 1-2 կամ 3 երկրաչափական պատկերից (ըստ դիմորդի ընտրության) և այդ պատկերների համադրության, կրկնության կամ դրանց չափերի մեծացման կամ փոքրացման միջոցով կազմակերպել կոմպոզիցիա: Լուծումը՝ միագույն (գրիզալ) և հարթային:

Անհրաժեշտ նյութերը.

A2 չափսի թուղթ, 50x70 չափի պլանշետ, մատիտ, ջրային ներկեր, գուաշ, ակրիլ, տուշ, ֆլումաստեր:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 6 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

Գնահատման չափանիշները.

ա. ստեղծագործության տեղադրումը թղթի մակերեսի մեջ	0-3 միավոր
բ. դետալների չափսերի փոխադարձ հարաբերությունը	0-4 միավոր
գ. կոմպոզիցիոն կառուցումը	0-5 միավոր
դ. ծավալային (լուսաստվերային) կամ հարթային լուծումները	0-4 միավոր
ե. տոնային (կոլորիտի) լուծումները	0-4 միավոր

021301.01.6 ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Գեղանկարչություն մասնագիտությամբ ՀԳՊԱ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Մերկ ֆիգուր բնորդից

Անհրաժեշտ նյութերը.

Մատիտներ, A2 չափի թուղթ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 12 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 4 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

ա) տրված առաջադրանքի տեղադրումը և կառուցումը թղթի վրա	0-4 միավոր
բ) բնորդի անատոմիական և պլաստիկայի խնդիրների լուծումը	0-4 միավոր
գ) ծավալային ամբողջականության արտահայտումը լույսի և ստվերի միջոցով	0-4 միավոր
դ) առաջադրանքում հեռանկարի և միջավայրի առկայությունը	0-4 միավոր
ե) բնորդի կերպարային բնութագրի բացահայտումը	0-4 միավոր

2. Գունանկար

Առաջադրանք.

Մերկ ֆիգուր բնորդից

Անհրաժեշտ նյութերը.

Յուղաներկ, նվազագույնը՝ 50x70 սմ չափի կտավ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 16 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 4 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

ա) տրված առաջադրանքի տեղադրումը և կառուցումը կտավի վրա	0-4 միավոր
բ) ծավալային ամբողջականության արտահայտումը գույնի, լույսի և ստվերի միջոցով	0-4 միավոր
գ) հեռանկարի և միջավայրի առկայությունը կտավում	0-4 միավոր
դ) միջավայրի և բնորդի գունային կապը	0-4 միավոր
ե) բնորդի կերպարային բնութագրումը	0-4 միավոր

3. «Կոմպոզիցիա»

Առաջադրանք.

Կոմպոզիցիա տրված թեմայով

Անհրաժեշտ նյութերը.

Յուղաներկ, նվազագույնը՝ 40x50 սմ չափի կտավ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 7 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

ա) թեմային բնորոշ իրավիճակին (դրվագ) համապատասխան կոմպոզիցիոն լուծում	0-4 միավոր
բ) կերպարների և միջավայրի կապը	0-4 միավոր
գ) գեղանկարչական համապատասխան կոլորիտը	0-4 միավոր
դ) հերոսների կերպարային լուծումը	0-4 միավոր
ե) Թեմայի բացահայտումը գծանկարի, գունանկարի և հեռանկարի միջոցով	0-4 միավոր

021301.03.6 ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Քանդակագործություն մասնագիտությամբ ՀԳՊԱ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ «Գծանկար», «Քանդակ» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Մերկ ֆիգուր - բնորդից

Անհրաժեշտ նյութերը.

Մատիտներ, A2 չափի թուղթ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 12 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 4 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

ա) ֆիգուրի տեղադրումը թղթի մեջ	0-4 միավոր
բ) բնորդի պլաստիկան	0-4 միավոր

- | | |
|---|------------|
| գ) համաչափությունների ճշտությունը բնորդի հետ | 0-4 միավոր |
| դ) ֆիզուրի կառուցման անատոմիական ճշտությունը | 0-4 միավոր |
| ե) գծանկարի քանդակայնությունը, կառուցողականությունը | 0-4 միավոր |

2. «Քանդակ»

Առաջադրանք.

Դիմաքանդակ - բնորդից

Անհրաժեշտ նյութերը.

Կավ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 16 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 4 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

- | | |
|--|------------|
| ա) գլխի և պարանոցի շարժման ճշտությունը | 0-4 միավոր |
| բ) համաչափությունների և անատոմիական կառուցվածքի պահպանումը | 0-4 միավոր |
| գ) ոսկորների տեղադրումը | 0-4 միավոր |
| դ) կերպարի բացահայտումը | 0-4 միավոր |
| ե) ծավալների մշակման ֆակտուրան | 0-4 միավոր |

3. «Կոմպոզիցիա»

Առաջադրանք.

Էսքիզ տրված թեմայով

Անհրաժեշտ նյութերը.

Կավ կամ պլաստիլին , չափը՝ ոչ մեծ քան 30 սմ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 7 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

ա) տրված թեմայի կոմպոզիցիոն բացահայտումը	0-4 միավոր
բ) համաչափությունների ճշտությունը	0-4 միավոր
գ) կոմպոզիցիոն կառուցվածքին բնորոշ մոտեցումը	0-4 միավոր
դ) կատարողականի թարմությունը	0-4 միավոր
ե) կոմպոզիցիայի զգացմունքայնությունը	0-4 միավոր

021301.02.6 ԳՐԱՏԻԿԱ

Գրաֆիկա մասնագիտությամբ ՀԳՊԱ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություններ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

1. «Գծանկար»

Առաջադրանք.

Մերկ ֆիգուր - բնորդից

Անհրաժեշտ նյութերը.

մատիտ, A2 չափի թուղթ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 12 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 4 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

ա) բնորդի ֆիգուրի տեղադրումը թղթի վրա	0-4 միավոր
բ) համաչափությունների պահպանումը	0-4 միավոր
գ) անատոմիական կառուցվածքի պահպանումը	0-4 միավոր
դ) տոնի միջոցով ծավալների արտահայտվածությունը	0-4 միավոր
ե) բնորդի և միջավայրի ամբողջականությունը	0-4 միավոր

2. «Գունանկար»

Առաջադրանք.

Դիմանկար բնորդից

Անհրաժեշտ նյութերը.

A3 չափի թուղթ կամ 40x50 չափի կտավ, ջրային ներկեր կամ յուղաներկ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 12 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 4 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

- | | |
|---|------------|
| ա) բնորդի տեղադրումը թղթի վրա | 0-4 միավոր |
| բ) համաչափությունների ու անատոմիական կառուցվածքի պահպանումը | 0-4 միավոր |
| գ) կերպարի և միջավայրի գունային խնդիրների ներդաշնակությունը | 0-4 միավոր |
| դ) գունային ամբողջականությունը | 0-4 միավոր |
| ե) բնորդի կերպարի բացահայտումը | 0-4 միավոր |

3. «Կոմպոզիցիա»

Առաջադրանք.

Գրքի նկարագրարդման էսքիզ՝ տրված թեմայով(գույնով)

Անհրաժեշտ նյութերը.

ջրային ներկեր(ըստ ցանկության), A2 չափի թուղթ

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 7 ակադեմիական ժամ, կազմակերպվում է 1 օրվա ընթացքում

Գնահատման չափանիշները.

ա) թեմատիկ առաջադրանքի՝ հորինվածքի համապատասխանությունը տրված թեմային	0-4 միավոր
բ) կոմպոզիցիոն դրվագի համապատասխանությունը թեմային	0-4 միավոր
գ) կոմպոզիցիայի գունային միջավայրի կազմակերպվածությունը	0-4 միավոր
դ) կերպարային համապատասխանությունը բովանդակությանը	0-4 միավոր
ե) կերպարի և միջավայրի համապատասխանությունը թեմային	0-4 միավոր

021801.02.6 ԱՐՎԵՍՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արվեստաբանություն մասնագիտությամբ ՀԳՊԱ ընդունվելու համար դիմորդները հանձնում են քննություն «Կերպարվեստի պատմություն և տեսություն (բանավոր)» և Կերպարվեստի պատմություն (գրավոր) առարկաներից:

Հարցաշար

Ներածություն

1. Կերպարվեստը արվեստների համակարգում: Կերպարվեստի տեսակները և յուրաքանչյուր տեսակում եղած ստորաբաժանումները:
2. Գեղանկարչություն: Տարատեսակները՝ որմնանկար, նկար կտավի, փայտի և թղթի վրա:
3. Գեղանկարչության տեխնիկաները՝ ջրաներկ, գուաշ, տեմպերա, յուղաներկ:
4. Գրաֆիկա: Նրա տարատեսակները՝ գծանկար(հաստոցային գրաֆիկա) և տպագրական գրաֆիկա:
5. Գծանկարը և գծանկարի նյութերի(սանգինա, ածուխ, մատիտ, պաստել, տուշ) ճանաչում և արտահայտամիջոցների նկարագրում:
6. Տպագրական գրաֆիկա: Օֆորտ, վիմագրություն(լիտոգրաֆիա), լինոփորագրություն, փայտագրություն:
7. Քանդակ: Քանդակագործության կոշտ և փափուկ նյութերը: Քարե(մարմար, կրաքար, բազալտ, տուֆ) և մետաղյա(բրոնզ, ոսկի, արծաթ) քանդակների առանձնահատկությունները:
8. Կլոր, ռելիեֆային(հարթաքանդակ, բարձրաքանդակ, խորաքանդակ) և բազմաֆիգուր քանդակներ:
9. Ճարտարապետությունը որպես տարածական արվեստ: Նրա առնչությունը նկարչությանը(զծերի և հարթությունների զուգորդում) և քանդակագործությանը(ծավալների և զանգվածների հարաբերակցում):

ԺԱՆՐԵՐ

1. Ժանրերը քանդակագործության մեջ - դիմաքանդակ, կիսանդրի, տորսո(իրան), հուշարձան, ձիարձան, անիմալիստական (կենդանու)քանդակ:
2. Պատմական, դիցաբանական, աստվածաշնչյան ժանրերը գեղանկարչության և քանդակագործության մեջ:
3. Բնանկարը և նրա տեսակները(դիցաբանական բնանկար, լանդշաֆտ, ծովանկար, քաղաքային նկար):
4. Դիմանկար: Օրինակներ:
5. Նատյուրմորտ: Օրինակներ:
6. Կենցաղային ժանր: Օրինակներ:

ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական միջնադարյան կոթողները, խաչքարերը և ճարտարապետական քանդակագործությունը:
2. Հայկական միջնադարյան մանրանկարչություն:
3. Բնանկարը հայ նոր արվեստում(Այվազովսկի, Բաշինջաղյան, Թադևոսյան, Թերլեմեզյան):
4. Բնանկարը խորհրդահայ արվեստում(Սարյան, Առաքելյան, Կոջոյան, Գյուրջյան, Չարդարյան):
5. Դիմանկարը հայ արվեստում(Հովնաթանյան, Աղաջանյան, Սարյան):
6. Հայկական պատմական նկարչություն(Մուրենյանց, Իսաբեկյան):
7. Հայկական գրաֆիկա(Շահին, Սարյան, Կոջոյան):
8. Հայկական քանդակագործություն(Անդրեաս Տեր-Մարության, Հակոբ Գյուրջյան, Արա Սարգսյան, Երվանդ Քոչար):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Նախնադարյան արվեստ:Քարանձավային նկարչություն, ժայռապատկերներ և քանդակներ: Հիմնական թեմաները:
2. Հին Եգիպտոսի արվեստը:Ճարտարապետություն, քանդակ, որմնանկար:
3. Հին Հունական և Հռոմեական ճարտարապետություն: Տաճարներ, օրդերներ, սյուներ, սյունաշարեր: Ճարտարապետական կոթողների տեսակները:
4. Հին Հունական և Հռոմեական քանդակագործություն, սափորանկարչություն, նկարչություն: Նշանավոր քանդակագործներ՝ Միլոն, Պոլիկլետ, Ֆիդիաս,Պրաքսիտելես, Լիսիպոս, Սկոպաս:
5. Միջնադարյան նկարչությունը և նրա տեսակները՝ խճանկար, որմնանկար, սրբապատկեր, մանրանկարչություն, վիտրաժ:
6. Վերածննդի և Բարոկկոյի արվեստը Իտալիայում - ճարտարապետություն, նկարչություն և քանդակագործություն(Ջոտտո, Մազաչչո, Բրունելլեսկի, Բրամանտե, Դոնատելլո, Լեոնարդո, Ռաֆայել, Միքելանջելո, Ջորջոնե, Տիցիան, Տինտորետտո, Վերոնեզե):

7. Վերածնունդը և Բարոկկոն Նիդեռլանդներում (Ֆլանդրիա, Հոլանդիա) և Գերմանիայում (Վան Էյկ, Բրեյգել, Ռուբենս, Ռեմբրանդտ, Հոլբայն, Դյուրեր):
8. Կլասիցիզմը և նոր դասականությունը (նեոկլասիցիզմ): Պուսսեն, Դավիդ, Էնգր:
9. Ռոմանտիզմը Ֆրանսիայում (Ժերիկո, Դելակրուա):
10. Ռեալիզմ: Իրականության հավաստի պատկերման սկզբունքները (Դոմինե, Կուրբե):
11. Իմպրեսիոնիզմ: Գեղարվեստական սկզբունքները և նշանավոր նկարիչները (Մանե, Մոնե, Ռենուար, Դեգա):
12. Պոստիմպրեսիոնիզմ: Գլխավոր ներկայացուցիչները (Սեզան, Սյորա, Գոգեն, Վան Գոգ):

Առաջադրանք: Կերպարվեստի պատմություն և տեսություն (բանավոր)

Դիմորդի գիտելիքները պարզելու նպատակով տրվում են հարցատոմսեր. Յուրաքանչյուր հարցատոմսում երեք հարց (ընդունելության ծրագրի սահմաններում)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- | | |
|--|--------------------------------------|
| ա) երեք հարցից յուրաքանչյուրին ճշգրիտ և լիարժեք պատասխանը | 0-5 միավոր
(յուրաքանչյուր հարցին) |
| բ) պատասխանների տրամաբանական հետևողականությունը և լեզվի գրագետ տիրապետումը | 0-3 միավոր |
| գ) վերլուծական կարողությունների ցուցաբերումը | 0-2 միավոր |

Առաջադրանք: Կերպարվեստի պատմություն (գրավոր)

Դիմորդի գիտելիքները պարզելու նպատակով առաջադրվում են թեմաների տարբերակները, որոնցից մեկին պետք է տրվի գրավոր պատասխան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- | | |
|---|-------------|
| ա) ճշգրիտ, ամբողջական և համակողմանի պատասխանը | 0-15 միավոր |
| բ) շարադրանքի տրամաբանական հետևողականությունը և գրավոր լեզվի գրագետ տիրապետումը | 0-3 միավոր |
| գ) ինքնուրույն մտածողության դրսևորումը | 0-2 միավոր |